

**ՏԵԱՌՆՆՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ - ՏՐԸՆԴԵՋ ՏՈՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(1920 - 1940-ԱԿԱՆ Թ.Թ.)**

Սամվել Մկրտչյան

Տեառնննառաջը¹ Հայոց եկեղեցու տերունական անշարժ տոներից է, որը նշվում է փետրվարի 14-ին, Քրիստոսի Ծննդից 40 օր հետո:

Տեառնննառաջը հայոց մեջ հայտնի է տարբեր անվանումներով՝ Տերընդեգ, Տըրընդեգ, Տերընտաս, Տանդառեց, Դառդառանց, Դոնտառունց, Դոդոռաց, Դոռունց, Դրոն Դոռունց, Դառանց, Տոռունց-տոռունց, Տառինց-տառինց, Տնդալեշ, Դըրընդոջի, Մելետ, Մելեմետ-Տերընտաս, Դըրընդոջի, Դոդոռունց և այլն: Սակայն կենցաղում առավել տարածված էր Տրընդեգ անվանաձևը²:

Տոնի ամենատարածված բաղադրիչը ծիսական խարույկի արարողությունն էր, որն սկսվում էր նախորդ օրը՝ փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո:

Տոնական խարույկն անտառային շրջաններում վառում էին փայտից և հատկապես գիհու (ցրտնի, ցրտեն, ցիրդ, ցրդի) ճյուղերից³ (ըստ ավանդության, նորածին Քրիստոսին այդ ծառի ճյուղերով էին բարուրել):

¹ Տեառնննառաջ անվանունը ստուգաբանվում է քրիստոնեական ավանդությամբ: Համաձայն ավանդական օրենքի՝ մայրը 40 օրական զավակին պիտի տաներ տաճար, Աստծուն նվեր մատուցեր և աղոթեր: Մարիամը ևս 40 օրական Հիսուս մանուկին տանում է տաճար: Այստեղ էր Սիմեոն անունով բարեպաշտ ծերունին, որն Աստծուց խնդրում էր կյանքը երկարացնել այնքան, մինչև տեսնի աշխարհի ու մարդկության Փրկչին: Նա հրաշքով զգում է Փրկչի ներկայությունը և ընդառաջ ելնում Հիսուս մանուկին, որտեղից էլ՝ «Ելանել ընդ առաջ Տեառն» արտահայտությունն է:

² **Ս. Մկրտչյան**, Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010, էջ 44-45: Ազգագրական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունները վկայում են, որ հայոց արդի կենցաղում ևս առավել տարածված է Տրընդեգ անվանաձևը:

³ **Ե. Լալայեան**, Գանձակի գաւառ, ԱՀ, գիրք 2, տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1900, էջ 366: Զանգեզուր, Զանգեզուր, ԱՀ, գիրք Դ, № 2, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի և Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1898, էջ 108: Սիսիան, ԱՀ, գիրք Գ, № 1, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, Թիֆլիս, 1898, էջ 253:

Գիհու խրճերի¹ հետ օգտագործում էին նաև թթենու ճյուղեր², կախ և չոր խոտ³: Անտառագուրկ վայրերում օգտագործում էին ծղոտ և տարբեր փշեր: Որոշ տեղերում որպես վառելիք տարածված էր նաև ձմեռվա անասնակերի մնացորդը (կրճոնքը)⁴:

Ամենուր ցորենից, գարուց, կորեկից, ոսպից ու սիսեռից աղանձ էին պատրաստում: Հարսնացուի ու փեսացուի անուններով խնամիներն աղանձափոխանակություն էին կատարում: Նորապսակներին տրված նվերները հմայական բնույթ ունեին, որոնց նպատակը սպասվող առատ բերքին ու սերնդածին նպաստելն էր:

Վառված խարույկի շուրջը պտտվում և նրա վրայով ցատկում էին գրեթե բոլորը, սակայն առաջնությունը տրվում էր նորապսակներին: Վերջիններիս ուղեկցելու իրավունքը վերապահված էր պատվավոր անձանց (քավոր, քավորկին, խաչեղբայր և այլն)⁵:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ բոլշևիկյան հալածանքներին ենթարկվեց նաև ավանդական Տրընդեզը:

Այդուհանդերձ, նույնիսկ մերժողական այդ պայմաններում տոնը շարունակում էր կենցաղավարել մասնավորապես ընտանեկան-ազգակցական միջավայրում:

Չնայած տարածման նեղ մասշտաբներին, պահպանվել էին տոնին առնչվող գրեթե բոլոր ժողովրդական սովորույթները՝ երդիկներին տեղադրված դեզերի այրումից և դրա շուրջը ծավալված արարողություններից մինչև սրբազան կրակի ծխի ու մոխրի հետ կապված հավատալիքներն ու գուշակությունները:

Տրընդեզն ավանդաբար ընկալվում էր որպես նորապսակների և նշանվածների տոն, և այդ պատճառով ծիսական արարողությունները

¹ **Ստ. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, № 12, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 70:

² **Ստ. Լիսիցյան**, Մեղրի, 1932 թ., ՀԱԱ, ֆ. 428, գ. 116, ց. 4, էջ 29 (31):

³ **Մ. Բեգյան**, Լեռնային Ջազիր գյուղի պատմությունը. 1795-1975 թթ., 1981, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 10, 11/ 150, էջ 11:

⁴ **Վ. Ղազարյան**, Լոռվա գավառի Թումանյանի (նախկին Ալավերդու) շրջանի Չկալով գյուղի ազգագրական նյութեր, 1975 թ., Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս 3, էջ 261:

⁵ **Ռ. Նահապետյան**, Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Երևան, 2009, էջ 140:

պարտադիր կազմակերպվում էին նորահարս ու նշանված ունեցող ընտանիքներում:

Շատ հաճախ բաժինք (օժիտ) տանելու ժամկետը ևս համընկնում էր Տրընդեզին¹: Բաժինքի տեսականին բավականին համեստ էր՝ հիմնականում ընդգրկելով նորահարսի անձնական իրերը:

Տրընդեզի նվիրական ուտեստը (խեճախ-աղանձ, հալվա, չիր և այլն) ևս պահպանվել էր²:

Կրակի շուրջը ծավալված արարողությունների ժամանակ մեծ տեղ էր տրվում քավորին և քավորկնոջը, որոնց վերապահված էր նորապսակներին ուղեկցողի դերակատարությունը:

Ծխի միջոցով գուշակություններ էին անում առատ բերք ստանալու ակնկալիքով³:

Երդիկից հիվանդներին պարանով իջեցնում էին՝ ապաքինվելու հավատով⁴:

Կրակի ածուխով մառանի ու տան երդիկներին շրջանակ էին գծում, որ չար աչքից ազատ պահեին մառանի «թանն ու թացանը»⁵:

Հավատում էին Տրընդեզի կրակի և մոխրի հմայությանը: Տարեց կանայք հավերի փետուրները խանձում էին, որ դրանք լավ թուխս նստեն և շատ ձու ածեն: Այդ նպատակով ծիսական մոխրից հավերի տակ էին լցնում⁶:

Կարկուտի ժամանակ մոխիրը փչում էին դեպի երկինք, որ այն կտրվի, կամ բաղերի ու արտերի վրա էին շաղ տալիս, որ չվնասվեն: Վառվող

¹ **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Հրագդանի շրջան, գ. Քաղսի, 1987 թ., էջ 33: ԴԱՆ, Հրագդանի շրջան, գ. Արզական, 1987 թ., էջ 11-12: ԴԱՆ, Ապարանի շրջան, գ. Վարդենուտ, 1986թ., էջ 5-9:

² **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Ախուրյանի շրջան, գ. 1987 թ., Մարմաշեն, էջ 43-44: ԴԱՆ, Ախուրյանի շրջան, գ. Լեռնուտ, 1987 թ., էջ 54: ԴԱՆ, Արագածի շրջան, գ. Գեղադիր, 1986 թ., էջ 50: ԴԱՆ, Արզական, էջ 11-14: ԴԱՆ, Ապարանի շրջան, գ. Քուչակ, 1986 թ., էջ 16:

³ **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Քաղսի, էջ 31-34: ԴԱՆ, Վարդենուտ, էջ 4-5: ԴԱՆ, Արագածի շրջան, գ. Ծաղկահովիտ, 1986թ., էջ 27-28: ԴԱՆ, Արագածի շրջան, գ. Նորաշեն, 1986 թ., էջ 41: ԴԱՆ, Արագածի շրջան, գ. Գեղաձոր, 1986 թ., էջ 73-74: **Նիմանդ**, Տյառնընդառաջ, Անաստված, Երևան, 1931, № 1, էջ 13:

⁴ **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Քուչակ, էջ 16:

⁵ **Նիմանդ**, Տյառնընդառաջ, Անաստված, 1931, № 1, էջ 13:

⁶ **Ս. Մկրտչյան**, ԴԱՆ, Գեղադիր, էջ 50:

ծխի թեքվելը նաև նշան էր այս կամ այն կողմի դաշտերի բերրիության¹:

Կանայք ածուխով խանձում էին իրենց փեշերը՝ ամեն տեսակի «չլավից» (չարի ազդեցությունից) ազատվելու համար²:

Կրակով խանձում էին «սիրելի» գոմեշների պոչերը, որ «չաչքառեն» (աչքով չտան): Երիտասարդները Տրընդեզի համար ցորենի կապոցներ էին բերում ու այդ կրակով վառում, իսկ հասկերը փշրելով ուտում և միմյանց էին բաժանում իբրև «թաբառուկ» (օրհնություն)³:

Հավատում էին, որ վառված դեզից մնացած մոխիրը պահելով տանը՝ բախտ ու հաջողություն, առատ հաց կունենան:

Տոնաձիսական արարողությունները հիմնականում կատարվում էին ընտանիքներում, մերձավոր ազգականների և խնամիների մասնակցությամբ:

Տոնի կապակցությամբ պատարագ լսելու և սրբազան կրակն իրենց տները տանելու նպատակով եկեղեցի հաճախելը մասամբ էր պահպանվել⁴: Դա բացատրվում էր Տրընդեզի ընտանեկան բնույթով և խորհրդային իրականությամբ, որի հալածանքներից այն ևս զերծ չմնաց:

Որպես ավանդական-եկեղեցական այդ տոնին հակակշիռ՝ իշխանությունները կազմակերպում էին հակակրոնական միտինգներ, երթեր և ներկայացումներ⁵:

Այսպիսով, նույնիսկ խորհրդային հալածանքներին, կենցաղում դեռևս պահպանվել էր Տրընդեզի ժողովրդական ծիսահամալիրը՝ ուտեստը, նորապսակների ազգականների փոխայցելությունները, օժիտը, ծիսական խարույկի հետ կապված արարողությունները, գուշակությունները, որոնցով ակնկալվում էր սպասվող բերքի առատություն, երջանկություն և հիվանդություններից ձերբազատում:

¹ Նիմանդ, նշվ. աշխ., էջ 13: Եկեղեցական տոներ, Երևան, 1931, էջ 56-57:

² Նիմանդ, Եկեղեցական տոներ, Երևան, 1931, էջ 56-57: Ս. Մկրտչյան, ԴԱՆ, Գեղաձոր, էջ 73-74:

³ Նիմանդ, նշվ. աշխ., էջ 56-57:

⁴ Ս. Մկրտչյան, ԴԱՆ, Նորաշեն, էջ 41: ԴԱՆ, Քուչակ, էջ 31-33:

⁵ Ս. Մկրտչյան, ԴԱՆ, Քուչակ, էջ 16:

**ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ - ՏՐԸՆԴԵՋ ՏՈՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920 – 1940 –ԱԿԱՆ ԹԹ.)**

Սամվել Մկրտչյան

Քանայի բառեր - Տեառնընդառաջ, Տրընդեզ, Կոն, ծես, դեզ, խարույկ, ծուխ, մոխիր, նորապսակ, նշանված, հավաքալիք, գուշակություն, օժիտ, կենցաղ, ուրեստ, ավանդական, խորհրդային, բոլշևիկյան

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ բոլշևիկյան հալածանքներին ենթարկվեց նաև ավանդական Տրընդեզը:

Նույնիսկ մերժողական այդ պայմաններում տոնը շարունակում էր կենցաղավարել մասնավորապես ընտանեկան-ազգակցական միջավայրում:

Չնայած տարածման նեղ մասշտաբներին, պահպանվել էին տոնին առնչվող գրեթե բոլոր ժողովրդական սովորույթները՝ երդիկներին տեղադրված դեզերի այրումից և դրա շուրջը ծավալված արարողություններից մինչև սրբազան կրակի ծխի ու մոխրի հետ կապված հավատալիքներն ու գուշակությունները:

Տրընդեզն ավանդաբար ընկալվում էր որպես նորապսակների և նշանվածների տոն, և այդ պատճառով ծիսական արարողությունները պարտադիր կազմակերպվում էին նորահարս ու նշանված ունեցող ընտանիքներում:

Տրընդեզին հաճախ համընկնում էր օժիտ տանելու ժամկետը: Վերջինիս տեսականին բավականին համեստ էր՝ հիմնականում ընդգրկելով նորահարսի անձնական իրերը:

**ПРАЗДНИК ТЕАРНЫНТАРАЧ-ТЕРЕНДЕЗ В СОВЕТСКИЙ ПЕРИОД
(1920-1940-Е ГГ.)**

Самвел Мкртчян

Ключевые слова - Теарнынтарач, Терендез, праздник, ритуал, стог, дым, пепел, новобрачные, обрученные, поверье, гадание, приданое, быт, блюдо, традиционный, советский, большевистский.

После установления советской власти в Армении, большевистским преследованиям был подвергнут также традиционный праздник Терендез.

Даже в условиях подобного отрицания, праздник продолжал бытовать в частности в семейно-родственной среде.

Невзирая на малый масштаб распространения, сохранились почти все народные обычаи, имеющие отношение к празднику: начиная со сжигания стог

сена на ердиках и церемоний вокруг них до поверий и гаданий, связанных со священным огнем и дымом.

Терендез традиционно воспринимался как праздник новобрачных и помолвленных пар, и потому ритуальные церемонии были организованы в обязательном порядке в семьях, где была новая невестка или помолвленная.

С Терендезом зачастую совпадало время отправления приданого. Ассортимент приданого был достаточно скромным, в основном включая личные вещи новобрачной.

THE FEAST OF TYARNDARACH-TRNDEZ IN THE SOVIET PERIOD (1920-1940'S)

Samvel Mkrtchyan

Key words - *Tyarndarach* , *Trndez*, *feast*, *ritual*, *stack*, *bonfire*, *smoke*, *ash*, *just married*, *engaged couple*, *belief*, *fortunetelling*, *dowry*, *everyday life*, *dish*, *traditional*, *Soviet*, *Bolshevist*.

After establishment of the Soviet regime in Armenia, traditional feasters of Trndez met the Bolshevik persecutions. Even in conditions of negation, the feast continued to be practiced in family-kin environs.

Despite the small-scale distribution, all of the folk habits concerning the feast were preserved: beginning from the stack burning on erdiks and ceremonies around those stacks, to beliefs and fortunetelling, connected to the sacred fire and smoke.

Trndez was traditionally perceived as a feast of the just married and engaged couples. That is the reason why the ritual ceremonies were organized in an obligatory manner in the families, wherever a new daughter-in-law or engaged lady lived.

The time when the dowry was sent often coincided with Trndez. The assortment of the dowries was quite modest, and mostly included personal belongings of the newly wed.